



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 10. >> *Matevosyan* 2019թ.  
ք. Արմավիր

N *ՎՊԳ/51-2019*

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 10-րդ, 21-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետի գրությունը, քաղաքացիների դիմումների, բողոքների քննարկման (ներառյալ «թեժ գծով» ստացված) գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների քննարկմանը մասնակցելու նպատակով.

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին 2019 թվականի մայիսի 10-ին գործուղել քաղաք Երևան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

*X S. Matevosyan*

VERIFIED OCSP 5/10/2019 11:47:09 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230